

ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐԱՄՈՒՏ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԷՍԵՐԻ ՄԱՍԻՆ.

Հայ ժողովուրդը անտեսական և քաղաքական պայմանների չնորհիւ, հեռանալով իր բուն հայրենիքից, ցրւած է աշխարհի ամեն կողմերը: Արանդ էլ նա գնում է, որանդ էլ հաստատուում է ամուռւմ է իւր հետ ազգային եկեղեցու ձէսերն ու սովորութիւնները, օտար ազգեցութիւններից զերծ չեն մնում և զանազան տեղի գաղութներ անգիտակցաբար, առանց քննելու իւրացնում են տեղական կրօնական սովորութիւնները և ձուլում ազգայինի հետ: Արտհետն իւրացումը անգիտակցաբար է, ուրեմն երաշխաւորել, որ նրանք խելացի, օգտակար կամ նոյն իսկ անմեղ բնաւորութեան կը լինին՝ չի կարելի. դրա համար էլ կարեւոր է, որ հայ եկեղեցու տեղական ներկայացուցիչները—քահանաները, իրենք հետամուտ լինին, որ ազգային եկեղեցին պահի իւր անաղարտ բնույթը և գաղութի ուշադրութիւնը դարձնի արտաքին ազգեցութեան չնորհիւ ներս սպրդած սովորութիւնների վերայ, ցոյց տալով հայ եկեղեցուն նրանց անհարադատ լինելը:

Ճաւոր սրտի պէտք է նկատել, որ այդպիսի նորամուտ սովորութիւնները նւիրագործւում են հէնց նոյն պաշտօնեաների ձեռքով, սրանց ձեռքով պիտի մաքրուէին, որովհետև այդ պաշտօնեաների անտեսական դրութիւնը այնպէս է, որ նրանք ակամայ, շատ անգամ, պէտք է ձխականների համար հաճելին անեն, ուստի և լիովին մեղադրել նրանց այդպիսի անուղիղ վարմունքի համար՝ իրաւացի չի լինել: Մնում էր սպասել, որ կեղերոնական հոգևոր իշխանութիւնը զէնք տար իր պաշտօնեաների ձեռքը—հրահանգելով նրանց բացարձակ կերպով դէմ դնալ հայ եկեղեցուն անհարադատ ձէսերին և սովորութիւններին, քարոզելով այդ մասին ժողովրդին բարձր հոգևոր իշխանութեան հրահանգ ձեռքին: Ասկայն բարձր հոգևոր իշխանութեանն էլ մեղադրել այս հանցամանքում առաջնորդող շինելու պատճառով, նոյնպէս դժւար է, որովհետև բացարձակ կերպով ասել թէ նա զրտակ է և զամ իրականութեան՝ չի կարելի:

Այս հանցամանքները աչքի առաջ ունենալով, ևս պարտք եմ համարում և իմ ամենուրեք տարագրւած պաշտօնակիցներին ևս պարտաւորեցնում եմ հաղորդել կեղերոնական հոգևոր իշխանութեան զանազան վայրերում եկեղեցու մէջ տեղ գտած օտար սովորութիւնների, ձէսերի, պաշտամունքների մասին, որպէս զի այդ ամենը հիմք ունենալով բարձր հոգևոր իշխանութիւնն էլ իր կողմից տայ կարևոր հրահանգը:

Հայոց ազգային Լուսաւորչական եկեղեցին մի ամբողջութիւն է: Մի ամբողջութիւն է նաև նորա եկեղեցական արարողու-

Թիւնը և ծիսակատարութիւնը: Բնական է սպասել, որ հէնց եկեղեցու պաշտօնեան լինէ՛ նա էջմիածնում, Տփխիսում. Պետերբուրգում, Ամերիկայի որ և է գաղութում թէ Թուրքեստանում, Թիւրքիայում թէ Պարսկաստանում, որոշ պարագաներում, որոշ ծէս կատարի եկեղեցու ամբողջութեան կողմից արդարձեւ և ոչ թէ յարմարէի շրջապատին: Այսպէս է նայում ամեն եկեղեցի իւր ունեցածի վերայ:

Հայոց եկեղեցու ծիսարանը՝ Մաշտոցն է: Այն ամենը, որ Մաշտոցից դուրս է, դուրս է ուրեմն նաև Հայոց եկեղեցու ընդունած կարգերից, իմ կարծիքով—անընդունելի: Բայց զանազան անշուքում կան նորամօյժ սովորութիւններ, որոնք թէև դուրս Մաշտոցից, բայց ընդունւած են և բազմազանութիւն են մշակուած ծիսակատարութեան մէջ: Այսպէս օրինակ. մկրտութեան ժամանակ կնքանայրը ընծայում է իւր սանիկին սակայ կամ արծաթեայ խաչ, (Անդրկասպեան հայ գաղութներում), ի հարկէ այդ սովորութիւնը հայկական չէ. և խաչերն էլ ամենեկին չեն համապատասխանում հայկական ձևին, ուրիշ կերպ էլ չի կարող լինել. սովորութիւն չի եղել և համապատասխան արևստ էլ չի առաջացել:

Պատկի ժամանակ թագերով զարդարել պսակողների գլուխը. նոյնպէս հայկական ոչինչ չունի. Հայոց եկեղեցու ընդունածը ծագիկներից հիւսած պատկ է և ուրիշ ոչինչ:

Թագման կարգի հետ անբաժան է ջուր օրհնելը, որ սովորական է դարձել գիւղերում և քաղաքներում, որով լւանում են հանգուցեալի գինը Բանը այնտեղ է հասել, որ երբ չեն կամենում քահանային նեղութիւն տալ, կամ քահանան նեղութիւն չի ուզում քաշել, ուղարկում են մի բաժակ ջուր և խնդրում, որ քահանան տանը օրհնի, կամ հէնց ուղղակի օրհնած ջուր են խնդրում:

«Անրիժք» անունով սովորութիւն է դարձել ննջեցեալների համար, թագման՝ տանը վերաբերող կարգից դուրս, քանի ննջեցեալը եկեղեցի չի տարւած, կարգ կատարել նրանց որոշ ժամերին: Այս մասին Մաշտոցում ոչինչ չկայ սակայն:

«Ամրիժքը կը կատարուի հանգուցեալի բնակարանում, մինչև թագման օրը, երեկոները ժամի 6-ին, կամ առաւօտները ժամի 10-ին»: Կարգում ենք յայտարարած լրագրերում Տփխիսի, Բագւի, կամ Թուսաստանի այլ քաղաքների հայ հանգուցեալների մասին: Ո՞րն է այդ «ամրիժքը», ինչ են կարգում քահանաները, ինչով են առաջնորդուի... անհասկանալի է: Մեր պաշտօնական ծիսարանում թագման երևը կարգ գրեւեմ միայն. տան, եկեղեցու և գերեզմանի:

Չատկին և Զրօրհնէքին գիւղերում սովորութիւն է դարձել տան օրհնող քահանայի առաջ աղ ու հաց դնել, զեռ սա մի անմեղ բան է և խելացի ու խորհրդաւոր և գիւղացիների կողմից պա-

հանջ աղուհացի վերայ որոշ կարգ կատարել՝ չկայ: Իսկ երբ ջուր են դնում բաժակով քահանայի առաջ՝ (ինչպէս Անդրկասպեան երկրներում) պահանջում են, որ քահանան օրհնի:

Եթէ աչքի առաջ ունենանք, որ մի քանի քաղաքներում (Տփլիսիս և այլն) առանձին աւագանի մէջ օրհնած ջուր է պահուում զանազան աւելորդապաշտական կարիքների համար, կը տեսնենք թէ որքան այս կողմից ազգեւել է հայ եկեղեցին արտաքուստ, որ ի հարկէ ընտ. ցանկայի չէ:

Ժամերգութիւնների վերաբերմամբ յաւելումներ կամ փոփոխութիւններ ես չեմ լսել, բացի մի գէպքից: Մի երգեցողութեան ուսուցիչ Եկատերինոգարի մասին պատմում է, որ երբ առաջին անգամ ինքը իր պատրաստած խմբով պատարագին մասնակցում է, պատարագի վերջում լսում է գթգոհութիւն թէ ինչու «ամեն հայի» չերգեցին: Պարզւում է, որ այնտեղ սովորական է դարձել պատարագը վերջացնել «ամեն հայի սրտից բղխած» մաղթանքով:

Նորամուծութիւններն, յաւելումները ոչ միայն ազաւազում են հայ եկեղեցու ամբողջութիւնը, միօրինակութիւնը, միւս կողմից նրանք պատճառ են դառնում ժողովրդի մէջ քահանայի այսպէս կամ այնպէս գնահատելուն վրդովեցուցիչ դէպքեր են տեղի ունենում, երբ քահանան ժողովրդի սովորած մի նորամուտ ձեւը չի կատարում. այդ հանգամանքը աննկատելի չի անցնում քահանային նիւթապէս վարձատրելիս կամ բարոյապէս որակելիս.

Վերջացնելով խօսքս մինչև օրս իմ նկատած նորամուծութիւնների մասին, կրկին խնդրում եմ իմ պաշտօնակիցներին, նիւթադրելով, որ նրանք նոյնպէս եկեղեցու միօրինակութեան նախանձախնդիր կը լինին, իրենց դիտողութիւններն եւ հազորակել «Արարատին», որպէս զի բարձր հոգևոր իշխանութիւնն էլ իւր անկիւրը անի:

Ամբաս Բաճանայ Սարգսեանց

1912 թ. 25 Յուլիսի.

Սամարղանդ